

ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՆՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

27.04.2020 19:57



ՀՀ փաստաբանների պալատը բարերար, Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ Ռայմոն Եզեգեյանի աջակցությամբ իրականացնում է նոր սոցիալական ծրագիր:

Բարերարը ՀՀ փաստաբանների պալատին նվիրաբերություն է կատարել (**այսուհետ՝ Նվիրաբերություն**) Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային համավարակի (COVID-19) կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության ընթացքում փաստաբաններին նյութական և/կամ այլ օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Նվիրաբերությունը փաստաբանների միջև կբաշխվի հետևյալ երկու եղանակով՝

- մեկ (1) ամսվա անդամավճարի գումարի մարում (**այսուհետ՝ Անդամավճարի մարում**)՝ շուրջ **709** փաստաբանի համար.
- **10.000 (տասը հազար)** ՀՀ դրամի չափով միանվագ անհատույց օգնության տրամադրում (**այսուհետ՝ Միանվագ հատկացում**) շուրջ **425** փաստաբանի:

Մեկ ամսվա անդամավճարների գումարները վճարված կհամարվեն հետևյալ **709 (յոթ հարյուր ինը)** փաստաբանի համար՝

- Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվող և մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների (ըստ ցուցակի՝ **504 փաստաբան**, որն ենթակա է ճշգրտման).
- 60-69 տարեկան փաստաբանների (ըստ ցուցակի՝ **205 փաստաբան**)[1]:

Միանվագ հատկացում կտրամադրվի հետևյալ **425 (չորս հարյուր քսանհինգ)** փաստաբանի, այդ թվում՝

- 60-ից բարձր տարիք ունեցող փաստաբանների (**305 փաստաբան** (ըստ ցուցակի քանակը՝ 60-69 տարեկան փաստաբաններ՝ 205, 70-ից բարձր փաստաբաններ՝ 100)).
- փաստաբանի (**120 փաստաբան**), որը՝

- ունի երեք և ավելի անչափահաս երեխա, կամ

- ունի հաշմանդամություն ունեցող երեխա, կամ

- հանդիսանում է անչափահաս երեխայի (երեխաների) միայնակ ծնող, կամ

- ունի 1-ին, 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամություն:

Նվիրաբերությունը փաստաբանների միջև արդարացի ու ըստ կարիքի բաշխելու անհրաժեշտությունից ելնելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից ընդունվել է համապատասխան կարգ:

Ընդհանուր առմամբ, կարգի հաստատման օրվա դրությամբ կատարված հաշվարկներով, այս սոցիալական ծրագրից կարող են օգտվել շուրջ **1134** փաստաբան:


Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.04.2020թ. թիվ 73-Լ որոշումը.

Բեռնել «Բարերար Ռայմոն Եզեգեյանի կողմից արտակարգ դրությամբ պայմանավորված հի փաստաբանների պալատին տրամադրած նվիրաբերությունը տնօրինելու վերաբերյալ»

Կարգը.

[1] 70-ից բարձր տարիք ունեցող փաստաբաններն ազատված են անդամավճարից:


Առաջարկվող նորություններ



27.04.2015 ՌԱՅՄՈՆ
ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է
ՀՈՒՇԱԳԻՐ



29.04.2015 ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԾԱՎԱԼՈՂ 80
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ
ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ
ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎԾԱՐԻ
ԿԱՆԽԱՎԾԱՐԻ
ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ



10.07.2015 ՄԱՐԶԵՐԻ 80
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ
ՌԱՅՄՈՆ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ
ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ



14.12.2015 ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔՈՒՄ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ
ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ
ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎԾԱՐԻ
ԿԱՆԽԱՎԾԱՐԻ
ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })